

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

պետական ոչ առևտրային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում

ԻՐԱՎԱԲԱՆ - ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ

Պարտականությունները և լիազորությունները՝

- իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի և փաստաթղթերի իրավական վերանայում,
- իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի լեզվաբանական գնահատում՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների հետ համապատասխանության մասով,
- աջակցելու է թարգմանիչներին և եզրաբաններին իրավական համապատասխանեցման ենթակա միջազգային և Եվրասիական տնտեսական միության վերազգային իրավական հասկացությունների տեղայնացման հարցում,
- մասնակցելու է եզրաբանական նյութերի, շտեմարանների, ձեռնարկների մշակման աշխատանքներին:

Պահանջվող որակավորումը և հմտությունները՝

- իրավաբանության ոլորտում բարձրագույն կրթություն,
- ՀՀ իրավական համակարգի գերազանց իմացություն,
- միջազգային և Եվրասիական տնտեսական միության օրենսդրության և օրենսդրական տեխնիկայի իմացությունը կհամարվի առավելություն,
- անգլերենի գերազանց իմացությունը պարտադիր է,
- արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատությունում ստացած որակավորումը կամ մասնագիտացումը կհամարվի առավելություն,
- մասնագիտական աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,
- թարգմանության բնագավառում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձը՝ մրցակցային և հիմնված փորձի վրա:

Աշխատաժամանակը՝ լրիվ կամ կես դրույք (ազատ գրաֆիկով աշխատանքի համար խնդրում ենք չդիմել):

Պահանջվող փաստաթղթերն են՝

1. կենսագրական (CV)՝ հայերենով կամ անգլերենով,
2. բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, իսկ ուսանողների պարագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից տեղեկանք,
3. նույնականացման քարտի պատճեն կամ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները (բացակայության դեպքում՝ տեղեկանքի պատճեն)
4. երաշխավորագիր/բնութագիր նախկին աշխատավայրից և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունից, առկայության դեպքում :

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (անգլերենի, ռուսերենի իմացություն, ընդհանուր իրազեկություն, թարգմանչական և իրավական վերանայման հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կիրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 17.03.2018թ.:**

Փաստաթղթերն ուղարկել **mzargaryan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Կազմակերպության մասին

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայության ներքո: Կենտրոնի նպատակն է ապահովել ՀՀ և միջազգային իրավական ակտերի բարձրորակ թարգմանությունը անգլերենով, հայերենով և ռուսերենով:

(www.translation-centre.am)